

Ա Ր Ա Ր Ա Տ

ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԵՏԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ *

ԹԻԻ Գ. — ՇՐՋԱՆ Է

1874

ՏԱՐԻ 2. — ՄԱՐՏ 54

ԿՐՕՆԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՆՑԵԱԼՆ.

(Շ-Բ-Ն-Դ-Ե-Դ-Ե-Դ) :

1500
Ս. Գրիգոր Պարթև՝ կրկին տեսու-
թեամբ՝ Հայաստանեայց երկրորդ լուսա-
ւորիչ հանդիսանալով՝ երբ գրեալ թէ բո-
լոր Հայոց աշխարհը Վրիստոնէական հա-
ւատոյ լուսով կապծառացնէ և ճշմարիտ
Աստուածգիտութիւնը կտաւորէ ի սիր-
տըս և ի հոգիս Հաւատացելոց՝ ի 302-3
Փրկչական թուականս, անշուշտ Վրիս-
տոսի Փրկչին մերոյ վարդապետութիւն-
ներէն և պատուէրներէն ուսած և ոգևո-
րուած՝ — որ աւանդեց ոչ միայն հոգւոց՝
այլ և մարմնաց (մտաց) աչքերը բանալ և
լուսաւորել, — ամեն անգ Նկեղեցիներ
կանդնել տալէ և Նպիսկոպոսաց և Վա-
հանայից՝ այս ինքն Նկեղեցական կանոն-
ներ և պաշտօնէից ինչ ինչ հրահանգ և
սննդեան միջոցներ աւանդել և յատ-
կացուցանելէ զկնի՝ ի 303 թուականին՝
երկրորդ սրբազան պարտաւորութիւնը կը

փութայ ի գործ դնել, որպէս զն Նկե-
ղեցւոյ մանկանց մտաց աչքերը նա և զի-
տութեամբք ընտելացնէ՝ կրթէ և լուսա-
ւորէ, միանգամայն Վրիստ. Նկեղեցւոյ
և հաւատոց մշտնջենաւոր և պայծառ
յարատեութիւնը ապահովէ և արդիւ-
նաւորէ՝ որ Տէ Տէպն ՌԻՍՈՒՄՈՎ առաւել
կյաջողէր և կյաջողի միշտ:

Ուստի Ս. Գրիգոր՝ ինչպէս հաւատոց
քարոզութիւնը՝ սոյնպէս ուսումնական
կրթութիւնը իշխաններէն կսկսանի. ա-
մենէն առաջ բացած վարժարանը՝ Թա-
ղաւորական դպրոց եղած է, և անդ կըր-
թից իշխանները և նոյն ինքն Տրդատ Թա-
ղաւորը *), և յետոյ կհամոզէ և կհաւա-
նեցուցանէ զՏրդատ Թաղաւոր, ինչպէս
Ագաթանգեղոս **) Պատմադիր պարզ
կաւանդէ յատուկ զլիսով, — և նորա
աջակցութեամբ զանազան տեղեր դըպ-
րոցներ կբացուին և կհաստատուին, ան-

(*) Պատմ. Հայ. Գալլ. տպեալ ի Վենետիկ ի
1865, երես 94—95,

(**) Ագաթ. երես 309, Տիպ Կ. Պոլսոյ ի 1822.

խաբէր և քաղաքի մանկունք և պարտնէր
կհաւաքուին, որոց մէջ էին քրմաց որդիքն
ևս, և երկու դաս կազմած՝ կրօնը լեզու
և այլ Դպրոցնէնէր ուսուցանել կրօնայ
ոմանց շէյկն և այլոց Ասորի Դպրոցնէնէր
ևս մատակարարել պարտաւորեցնելով:

Այսպէս ուրեմն Ս. Գրիգոր Պարթև
կհասարակէ՝ կհանձնարէ և կբարեկարգէ
Եկեղեցիք և Դպրոցները Կոթլիկաց Դպր-
ոցաւորութեամբ, և կաւանդէ ըստ այսմ
շարունակել:

Այսպէս ուրեմն շաբաթ ևս վայելելով
Ս. Գրիգոր Պարթևի կրկին բարերարու-
թիւնքը թէ հոգւոց և թէ մտաց աշաց
լուսաւորութեանց համար, առաւել ևս
բորբոքուեցան Վրիստոնէական հաւատոց
ի սէր՝ այնքան զՍ. Գրիգոր պարտա-
ւորուեցաւ հետզհետէ բարեպաշտական
վայրեր և ուխտատեղիք հիմնել և բազ-
մապատկել, բազում վանորայք՝ կուսա-
նոցներ և հիւրանոցներ կառուցանել և
հաստատել, և այս ամենուն թէ ըստ բա-
րոյականին և թէ ըստ նիւթականին և
ռանդադին և խանդակաթ աջակցեցան Ս.
Տրդատ Թագաւոր և համայն ժողովուրդք:

Այս ամենն անշուշտ ժողովուրդեան օգ-
տին և արդիւնաւոր յառաջագիմութեան
համար էին, և ժողովուրդ արդեամբք
տեսնելով Վրիստոնէական կրօնի և պաշ-
տօնէից ի հոգիս և ի միտս քան զհիթա-
նոսականին և կռապաշտականին սիրած՝
պարզեաւ և քարոզած գերմարդկային
արգասիքները և կենցաղօգուտ և ազա-
տամիտ սկզբունքը՝ այլ ևս իսպառ նոցա
զղուելի եղան խաւարապաշտ սովորոյթն
և նախ քան զՎրիստոնէութիւնն պաշ-
տած կրօնն:

Ոչ ապաքէն այսպիսի արդեանց հե-
տեանք եղան նա և այն ամեն յաղթու-
թիւնք՝ զի մինչ շրջակայ հզօր և բազ-
մաթիւ այլազգի թշնամիք՝ որք Վրիստո-
նէութեան հակառակ լինելով՝ միանգա-
մայն շայոց ճշմարիտ Աստուածգիտու-
թեան վերայ յանհնարինս զայրացան և
վրէժխնդրութիւն լուծել և պատժել
փութացին, կորիզըն զպարտեցան և սար-
սափեցան շայոց Վրիստոսազօր վառ ե-
ռանդեան և ոգևորեալ ջանից և անպար-
տելի ուժոյ և քաջագործութեանց առ-
ջև: Եւ այսպիսի ճակատամարտք ոչ թէ
մի քանի տարի տեւեցին, այլ բազում
ժամանակ վերկացան, սակայն թշնամեաց
համար ապարդիւն անհետացան:

Ս. Գրիգոր Երանելին ոչ թէ միայն
Աստուածային գիտութեամբք, այլ և ըստ
ժամանակին՝ արտաքին դպրութեամբք ևս
հմուտ՝ լուսաւորեալ և լիացեալ գոյով՝
ինչպէս նաև Տրդատ Թագաւորն ոչ
աւելի նուազ քան զնա, քաջ զիտցաւ
ճշմարիտ Աստուածգիտութեան տարած-
ման և յարատեւութեան միջոցները ա-
պահովել Դպրոցներով և կրկնապատիկ
դպրութեամբք, և Երանելոյն բոլորովին
ատելի եղաւ ժողովուրդը խաւարի և տգի-
տութեան մէջ պահել, ինչպէս հիթանո-
սութեան և նիւթապաշտութեան ժամա-
նակ ամին հակառակ կզործէին քուրմք և
քրմապետք: Եւ այսպէսով այնքան սի-
րելի և պաշտելի հանդիսացաւ ժողովուր-
դեան երախտազէտ զգացմանց մէջ, որ
նորա մենակեաց ճշնասիրութեան հակա-
ռակ՝ կխնդրէին և կանձկային հանապազ-
իւրեանց մէջ տեսնել, և ի վերջոյ հնա-
րեցին այս միջոցը՝ որ նորա որդիքը գտան

և բերին, և ի նոցանէ մինը իւրեանց Հոփուպետ և զլուս որոշել տուին:

Ոչ ապաքէն այսպիսի արդեանց համար է՝ զի Ս. Գրիգոր երանելին մինչև անգամ մեր Ակեղեցւոյ հիմնադիր առաքեալներէն նախամեծար հանդիսացած և փառաւորուած կալաւորէր և կալաւորի Հայաստ. Ակեղեցւոյ մէջ:

Ս. Գրիգորէն ուսանելով իւր որդիք և թոռունք՝ մի և նոյն արգիւնաւոր ընթացքը շարունակեցին Հայաստանեայց Ակեղեցւոյ մէջ՝ ինչպէս Ազգային և Ակեղեցական պատմիչք կը հաղորդեն, և միշտ պաշտպանեցին զԱկեղեցին և զԺողովուրդըն օտարազգեաց ազգեցութեանց ճիւղաններէն՝ (որք իւրեանց ամեն կիբքերը և նպատակները յառաջ մղելոյ եռանդեամբ՝ չմնացին չարիք՝ զի չտեղացին Հայոց զխոյն): — Ակնարկածս չարամիտ ներգործութեանց և քաղաքականութեանց գլխաւոր դերասանք եղան Պարսիկք, Հռովմայեցիք և Յոյնք, և ոյք որ ներկայ Ժամանակիս ոգւոյն և ջանից խելամուտ են՝ դիւրաւ կհասկանան անցեալին մէջ խաղացուած դերերն՝ թէ ի՞նչ տեսակ տաղնապներ և վտանգներ կուտային Հայոց և Վրբիստ. Ակեղեցւոյ զխոյն:

Թէպէտ քաղաքական Ազգային պաշտօնակալ կամ նախարարներէն՝ նոյն իսկ թագաւորներէն մի քանիք դանուեցան՝ որք օտար կրիւք շաղտնուած կամեցան անարգել զԱկեղեցին և զԺողովուրդն, և երբ յուզողութիւն կհրաւիրուէին և կը յանդիմանուէին, վայրենական կատաղութեամբ բորբոքուած կսպառնային մինչև անգամ Ս. Ակեղեցւոյս Հայրապետները և Ապիսկոպոսները կտանջէին կամ թէ ան-

դէն կենազրաւ կնահատակէին զանազան միջոցներով, բայց ինչպէս Ս. Հայրապետք ներողամիտ սիրով կտանէին ամենայն ասանջանայ և չարչարանայ յօգուտ Ակեղեցւոյ և Ազգի, նոյնպէս Ակեղեցին ստուար մեծամասնութեամբ կհնահատէր նոցա ջանքը և յարգը, և երկնային սիրով յափշտակուելով բոտ ամենայնի ունկրնդիւր և անձնանուէր կհանդիսանային, միանգամայն Ակեղեցւոյ անձնանուէր Հայրապետաց և պաշտօնէից զիմադրող ոտիս և հալածիչները՝ անհաշտ աւելութեամբ հեռու կվարէին, և երբէք Հայրենեաց մէջ բնակարան չներկին տալ հակառակորդաց:

Այսպիսի շահատակութեանց ասպարէզին մէջ բազմարդիւն և անհամեմատ փայլած են Յուսիկ և Սեծն Աերսէս Ս. Հայրապետ, վերջինը միանգամայն ուսմամբք և զխոտութեամբք՝ ինչպէս նա և բարեպաշտութեամբք նշանաւոր հանդիսացած է:

Ո՛հ, թէ քանի՜ կտառապէր սիրտ Սեծին Աերսիսի և ազլքն կձմլուէին՝ երբ կտեսներ թագաւորին վտանգարեր զիրքը, նախարարաց երկպառակիալ յուզմունքը, դրացի օտարաց կորստաբեր քաղաքակախութիւնքը, յորոց Ժողովուրդն զրկեթէ յուսահատ վիճակի մէջ՝ ապաստանած էին առ Սուրբն և ի նմանէ՝ փրկութիւն կրակակէին:

Թէպէտ երանելի այրն Աստուծոյ կանխադէտ կտեսներ այն ամենը երբ աշխարհական կարգի մէջ կկենցաղավարէր, ուստի մինչ Ազգային Ժողովն՝ ընդ թագաւորի՝ նախարարաց և զինուորաց և Ժողովրդեան Հայոց՝ միաձայն ընտրեցին

զՍուրբն ի Հայրապետութիւն Հայոց, անմիջապէս հրաժեշտ տուաւ, բայց ամենեցուն թախանձ և խնդիր՝ միանգամայն Ակեղեցւոյ և Ազգի սէր և եռանդ յազմեց Սրբոյն, որ և յանձն առնելով Հայրապետական գերագոյն և սրբազան պաշտօնը՝ Աստուածաշնորհ կարողութեամբ յաջողեալ բազմադիրէն վաստակոց ի փոխարէն՝ իրաւամբ՝ ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍ կոչուեցաւ՝ ինչպէս պիտի տեսնուի ի յետագայս:

(Ծ-բ-ն-ի-է-է)

ՎԱՆԴԱՄ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՆԿՈՒՆԻ:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ժ Ո Ղ Ո Վ Ո Յ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՀԱՆԴԵՐՁ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԵԱՄԲ:

(Ծ-բ-ն-ի-է-է):

ԳԼ. ԺԷ.

Հինգերորդ Ժողով ի Գո-ի-ն վան Բա-րեւորդեայ զէկեղեցական և զաշխարհական:

(Ամբ Տեառն 645): Յառաջնում նը-ւագի անդ աւերանաց Գուին քաղաքի ի Հաղարացւոց՝ յամի Տեառն 639, յո-րում էր և Աթոռն Հայրապետական, Ժո-ղովով նախարարաց և յորդորմամբ Թէ-ողորոսի Ուշտունայ յաջորդեալ ի անդի Եզրի ի Աթուղիկոսութիւն Հայոց՝ Աե-սէս Երորդ Եպիսկոպոս Տայոց՝ զոչեցեալ Շինող յազադս բազմաց հռչակաւոր եկե-ղեցեացն ի նմանէ կառուցման ի Հայաս-տան, յազադս երկից զխաւոր պատճառաց

և անկարգութեանց մտեցոյց յԱկեղեցիս Հայոց՝ արար Ժողով ի Գուին ի վեցե-րորդումն ամի Հայրապետութեան իւ-րոյ, յորդումարեցան եօթնեւտասն Եպիս-կոպոսք և բազում վարդապետք և իշ-խանք ո՛չ սակաւք:

Եւրեք այսօրիկ էին ի Ժամանակին ան-կարգութեանց պատճառք լեալ ի Հա-յաստան և յիկեղեցականս:

Նախ՝ յայնմ Ժամանակի յայտնեալ էին մոլորական գրեանք յանուն Յով-հաննու Մայրավանեցւոյ, և աշակերտի նորին Սարգսի, որ և թարգմանեալ էր զաղանդաւոր գիրս Յուլիանոսի Աղիկառ-նացւոյ, զորմէ Յովհաննէս Աթուղիկոս Պատմ. ոչ տոյ կարծիս հերձուածողու-թեան վասն այնպիսւոյ իմաստութեան ան, այլ ի թշնամեաց հաւատոյ զայն համբաւ հանեալ զնմանէ, բայց որ ինչ յազադս աշակերտի նորին՝ ոչ հակառակի այնմ, զի ասէ, «Ջսմանէ (զՅովհան-նէ) ապա համբաւ ամբաստանութեան «պատմի, իբր գառն հերձուածս նմա «մուծանել յԱկեղեցի սուրբ, սակայն ես «ոչ կարեմ հաւանութիւն իմոյ կամացս «տալ այնպիսւոյ առնն . . . այլ կար-«ծիս իմն ընդունի սիրտ իմ ի հակառա-«կադիր և ի խորիմաց այլոց կամաց այս «գործ համբաւոյ լեալս Բայց եթէ սակս «Սարգսի աշակերտի նորա համբաւէ որ «զայսպիսի չար հերձուածս ընծիւղել, և «ես ո՛չ վասն նորա հակառակիմ, զի իմ «իսկ ընթերցեալ է զգիրս փնասու նորա «Այլ վասն զի Յովհանն ի բաց յիւրմէ հա-«լածեաց զՍարգիսն, սակս այնորիկ ար-«տաքոյ կամաց նորա ասեմ զնորայն հեր-«ձուած »: